

## Խտրականության արգելման խստացում. Թիվ 12 Արձանագրություն

Կոնվենցիայի 14-րդ հոդվածով սահմանված խտրականության արգելման սահմանափակումները, որոնք ներկայումս լայն ճանաչում ունեն հանգեցրեցին նրան, որ Եվրոպայի խորհուրդը հիշյալ դրույթը խստացնելու մասին առաջարկներ ներկայացրեց<sup>1</sup>: Հոդված 14-ի հետ կապված հիմնական խնդիրն այն է, որ խտրականության չենթարկվելու իրավունքը ինքնուրույն չի գործում. փոխարենը, հոդվածը պետք է վկայակոչվի Կոնվենցիայի նյութական իրավունքներից մեկի հետ համակցությամբ (հոդված 14-ի առնչությամբ տե՛ս՝ 7.15-ում): Խտրականության մասին մյուս հոդվածը Արձանագրություն թիվ 7-ի հոդված 5-ն է, որը վերաբերում է ամուսինների հավասարությանը (տե՛ս՝ 7.28-ում): Ընդունված է նաև, որ խտրական վերաբերմունքը կարող է նաև հավասարագոր լինել արժանապատվությունը նսեմացնող վերաբերմունքին, ինչը հոդված 3-ի խախտում է (տե՛ս՝ 7.3.6-ում):

Հավասարության և խտրականության չենթարկվելու խնդիրները շոշափող լրացուցիչ արձանագրության ընդունումը քննարկվել է Եվրոպայի խորհրդում սկսած 1960-ական թվականներից, սակայն քննարկումն ավելի ազդու խթան է ստացել 1990-ականներին, հատկապես՝ սեռական և ռասայական խտրականությունների դեմ պայքարի կարևորության ճանաչման լույսի ներքո: Կանանց և տղամարդկանց միջև հավասարության հանձնախումբը (CDEG) քննության է առել կանանց և տղամարդկանց հավասարության նյութական իրավունքի սահմանման խնդիրը: Մեկ այլ փորձագիտական մարմին՝ Ռասիզմի և անհանդուրժողականության դեմ եվրոպական հանձնաժողովը (ECRI) անդրադարձավ ռասիզմի, քսենոֆոբիայի, հակասեմիտիզմի և անհանդուրժողականության հետ կապված խնդիրներին: Համապատասխանաբար, Կոնվենցիայի Թիվ 12 Արձանագրությունը կսահմանի խտրականությունն արգելող ինքնուրույն դրույթ: Արձանագրության տեքստն ընդունվել է Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի կողմից 2000 թվականի հունիսին: Այն բաց էր ստորագրման համար սկսած 2000 թվականի նոյեմբերից և պետք է ուժի մեջ մտներ 2005 թվականի ապրիլի 1-ին<sup>2</sup>:

Արձանագրություն Թիվ 12-ի հոդված 1-ն ամրագրում է.

1. Օրենքով սահմանված ցանկացած իրավունքի կիրառումը պետք է երաշխավորվի առանց խտրականության որևէ դրսևորման, օրինակ՝ սեռի, ռասայի, գույնի, լեզվի, կրոնի, քաղաքական կամ այլ կարծիքի, ազգային կամ սոցիալական ծագման, ազգային

<sup>1</sup> Տե՛ս Ջ. Մուն, «Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի՝ խտրականության դեմ արձանագրության նախագիծը» [2000] EHRLR 49:

<sup>2</sup> Միացյալ Թագավորությունը չի ստորագրել և չի վավերացրել Թիվ 12 Արձանագրությունը: Հիմնավորումը հետևյալն է. ա. Կառավարությունը սկզբունքորեն համաձայն է, որ ՄԻԵԿ-ը պետք է խտրականության դեմ ինքնուրույն և Կոնվենցիայի այլ իրավունքներով չսնվող առանձին դրույթ սահմանի: Սակայն կառավարությունը չի կարող ընդունել Եվրոպայի խորհրդի մեծամասնության կողմից, այդ նպատակով առաջարկված դրույթի խմբագրությունը բ. կառավարությունը վերանայում է իր դիրքորոշումը, սակայն Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի բացակայության պարագայում գտնում է, որ Միացյալ Թագավորության օրենսդրության մեջ արձանագրությունը ներառելու դեպքում, կշարունակեն մնալ անընդունելի և անորոշ մի շարք հարցեր՝ կապված Թիվ 12 Արձանագրության ազդեցության հետ:

- Արձանագրության տեքստը շատ ընդհանուր է և առնչվում է ցանկացած տարբերակված վերաբերմունքի: Այն կտարածվի հանրային մարմնի ցանկացած գործողության վրա, իսկ դրա կիրառությունը «օրենքով սահմանված իրավունքների» հանդեպ կծածկի օրենքների կամ ընդհանուր իրավունքի բազմաթիվ, թերևս բոլոր, դրույթները: Սա կհանգեցնի դատական գործերի թվի ավելացման, քանի որ մարդիկ կփորձեն հստակեցնել նոր օրենքի ազդեցության ոլորտը:

- Ավելին, «օրենքով սահմանված իրավունքների» ոլորտը, ինչպես նշված է Արձանագրությամբ, առանց այդպիսի դիտավորություն ունենալու կարող է ներառել նաև այլ միջազգային փաստաթղթեր, որոնց Միացյալ Թագավորությունը կողմ է հանդիսանում:

- Վերջապես, քանի դեռ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը չի անդրադարձել նոր Արձանագրությանը, չի կարող լինել լիարժեք համոզվածություն, որ այն ապահովում է անաչառ և ողջամիտ արդարացված պաշտպանություն, այն հիմքերով որ նախատեսված են ՄԻԵԿ-ի հոդված 14-ով (տե՛ս Սահմանադրական գործերի դեպարտամենտի Միջգերատեսչական վերանայման արդյունքների մասին զեկույցը 2004 թվականի հուլիս, հավելված 6):

փոքրամասնության պատկանելության, սեփականության, ծննդյան կամ այլ կարգավիճակի հիման վրա:

2. Ոչ ոք չի կարող պետական իշխանության կողմից ենթարկվել խտրականության որևէ դրսևորման, ինչպես, օրինակ, կետ 1-ում նշված հիմքերով:

Առաջին կետն արգելում է խտրականությունը «օրենքով սահմանված ցանկացած իրավունքի» առնչությամբ ի տարբերություն «սույն Կոնվենցիայով սահմանված իրավունքների և ազատությունների», ինչպես որ նախատեսված է հոդված 14-ում: Սա կարող է ներառել նաև միջազգային իրավունքը<sup>3</sup>: Կարևոր է, որ այս երկու կետերը միասին դիտարկվեն, քանի որ դրանք լրացնում են միմյանց: Արձանագրություն թիվ 12-ի բացատրական զեկույցի համաձայն այս երկու կետերի միասնական ազդեցությունը լինի այն, որ դրանք խտրականության դեմ պաշտպանություն ապահովեն հետևյալ չորս իրադրություններում.

ա. ազգային օրենսդրությամբ անհատին վերապահված իրավունքների իրականացման պարագայում,

բ. ազգային օրենսդրության համաձայն հանրային մարմնի հստակ պարտականությունից բխող իրավունքների իրականացման պարագայում, այսինքն՝ եթե համաձայն ազգային օրենսդրության՝ պետական մարմինն ունի որոշակի կերպ վարվելու պարտականություն,

գ. հանրային մարմնի կողմից հայեցողական լիազորությունների իրականացման պարագայում (օրինակ՝ որոշակի հատկացումների շնորհման պարագայում),

դ. հանրային մարմնի որևէ գործողության կամ անգործության պարագայում (օրինակ, անկարգությունները վերահսկելիս իրավապահ մարմինների ծառայողների վարքագիծը):

Արձանագրություն թիվ 12-ում նշված հիմքերի ցանկը նույնական է հոդված 14-ում թվարկվածների հետ: Որոշվել է բացահայտ կերպով չընդգրկել այնպիսի հիմքեր, ինչպիսիք են հաշմանդամությունը, սեռական կողմնորոշումը և տարիքը այն պատճառաբանությամբ, որ հիմքերի թվարկումն ամեն դեպքում սպառնիչ չէ և որ մի քանի այլ հիմքեր ներառելը նպաստավոր չի լինի չներառված հիմքերը հաշվի առնելիս: Ամեն դեպքում, Եվրոպայի խորհրդի կողմից խտրականության դեմ լրացուցիչ միջոցի ընդունումը, որը բացահայտ կերպով թվարկում է որոշ հիմքեր և չի ներառում հաշմանդամությունը, սեռական կողմնորոշումը և տարիքը, ցավալի է: Խորհրդարանական վեհաժողովն առաջարկել էր, որ սեռական կողմնորոշման հիմքի վրա խտրականության արգելումը և կանանց ու տղամարդկանց միջև իրավունքների հավասարությունը պետք է ուղղակիորեն սահմանված լինեին<sup>4</sup>:

Բացատրական զեկույցում նշվում է, որ Արձանագրությունը կարող է ստեղծել որոշակի պոզիտիվ պարտավորություններ, սակայն առաջարկվում է, որ ինչպես մասնավոր անձանց միջև, սրանք սահմանափակվեն որպես կանոն օրենքով կարգավորվող հանրային ոլորտի հարաբերություններով, որոնց առնչությամբ պետությունը կրում է որոշակի պատասխանատվություն (օրինակ՝ աշխատանքային պայմանագրերը):

Արձանագրության նախաբանն անդրադառնում է օրենքի առջև հավասարության և օրենքով պաշտպանվելու հավասար իրավունքի հիմնարար սկզբունքին: Այն նաև վերահաստատում է, որ խտրականության բացառման սկզբունքը չի արգելում պետություններին միջոցներ ձեռնարկել՝ լիարժեք և արդյունավետ հավասարություն ապահովելու համար՝ պայմանով, որ կա դրա անաչառ և ողջամիտ արդարացում: Համապատասխանաբար, պոզիտիվ խտրականությունը թույլատրելի է:

<sup>3</sup> Տես թիվ 12 Արձանագրության Բացատրական զեկույցի կետ 29-ը (առաջին հրատարակության հավելված 20-ը):

<sup>4</sup> Կարծիք թիվ 216 (2000), 26.1.00 թվական: